ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 օգոստոսի 2007 թվականի N 878-Ն

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածին և 9-րդ հոդվածի «գ» կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հաստատել ինովացիոն նախագծերի մրցույթների անցկացման և ֆինանսավորման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ս. Սարգսյան**

2007 թ. օգոստոսի 6
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 2-ի N 878-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է ինովացիոն գործունեության սուբյեկտների կողմից ներկայացված գիտական հետազոտությունների, մշակումների, փորձակոնստրուկտորական աշխատանքների կամ այլ գիտատեխնիկական արդյունքի օգտագործմամբ, տնտեսական շրջանառության մեջ իրացվելուն, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, նոր կամ կատարելագործված ծառայության կամ արտադրանքի ստեղծմանն ուղղված գործունեության նախագծերի (այսուհետ՝ ինովացիոն նախագծեր) մրցույթների անցկացման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորման կարգը:

II. ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԴՐԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

2. Ինովացիոն բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմինը հրապարակային ծանուցումը հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով՝ ինովացիոն նախագծերի հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջին օրվանից առնվազն 60 օր առաջ: Մրցույթի հրապարակային ծանուցումը պարունակում է համառոտ տեղեկություններ մրցույթի անցկացման նպատակի ու կարգի՝ մրցույթին մասնակցելու հիմնական պայմանների, այդ թվում՝ նաև մրցույթի հայտի ձև ստանալու, ինովացիոն նախագծերը կազմելու և ներկայացնելու կարգի մասին:

3. Լիազոր մարմինը մրցույթի հայտի ձևը տրամադրում է մրցույթի հայտի ձև ստանալու գրավոր պահանջ ներկայացրած անձին՝ նման պահանջ լիազոր մարմին մուտքագրվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթի հայտի ձևի պատճենահանման և առաքման ծախսերը կատարում է մրցույթի հայտի ձև ստանալու պահանջ ներկայացրած անձը:

4. Մրցույթի հրապարակային ծանուցումը պետք է պարունակի՝

1) մրցույթի հայտերի ներկայացման պայմանները՝ վայրը, ժամկետը.

2) մրցույթի հայտերին ներկայացվող հիմնական պահանջները.

3) մրցույթի հայտի ֆինանսական նախահաշվի ձևը.

4) մրցույթի մասնակիցներից պահանջվող որակավորման մասին տվյալներ.

5) մրցույթի հայտերի քննարկման և գնահատման ժամկետները.

6) մրցույթի հայտերի նախապատրաստման և ներկայացման մասին պահանջվող այլ տեղեկատվություն՝ լիազոր մարմնի հայեցողությամբ:

5. Մրցույթի հայտը պետք է պարունակի տեղեկություններ ինովացիոն նախագծում ներկայացվող խնդրի դրվածքի և նրա արդի վիճակի, ակնկալվող արդյունքների, խնդրի լուծման ճանապարհների ու թեմայի կատարման ժամկետների, դրա կատարման նպատակով առկա և ձեռք բերվող սարքավորումների և դրա համար անհրաժեշտ գումարների մասին: Ինովացիոն նախագծերի

կատարման ժամկետները նախատեսվում են մինչև 3 տարի:

6. Լիազոր մարմինն ընդունում է ինովացիոն նախագծերի հայտերը (այսուհետ՝ մրցույթի հայտ) և տրամադրում լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովին: Մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազոր մարմնի, շահագրգիռ նախարարությունների ու պետական մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև, լիազոր մարմնի հայեցողությամբ, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտական ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մրցութային հանձնաժողովը սահմանում է ինովացիոն նախագծերի գնահատման չափանիշներ:

7. Մրցութային հանձնաժողովի կողմից երաշխավորված մրցույթի հայտերը ներկայացվում են համապատասխան մասնագիտական փորձաքննության՝ մեկից ավելի փորձագետների:

8. Մրցութային հանձնաժողովի որոշմամբ լիազոր մարմինը կարող է պատվիրել լրացուցիչ շուկայագիտական կամ այլ կարգի փորձաքննություն:

9. Փորձագետները լիազոր մարմնի սահմանած կարգով փորձաքննության են ենթարկում ներկայացված յուրաքանչյուր հայտը՝ մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված չափանիշների հիման վրա, և եզրակացություն տալիս դրա հաստատման նպատակահարմարության մասին: Հայտերի փորձաքննության ժամանակ փորձագետների կողմից գնահատվում է ներկայացված հայտը:

10. Ինովացիոն նախագծերի հայտերի մասին եզրակացությունները մեկամսյա ժամկետում փորձագետները ներկայացնում են լիազոր մարմին՝ մրցութային հանձնաժողովի կողմից հայտերի վերջնական ընտրություն կատարելու նպատակով:

11. Լիազոր մարմինը հաստատում է փորձագետների դրական եզրակացություններն ստացած այն ինովացիոն նախագծերի ցանկը, որոնց ծախսերի նախահաշիվները ներառվելու են տվյալ տարվան հաջորդող տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում՝ որպես ինովացիոն գործունեությանը պետական աջակցության տարեկան ծրագրի (այսուհետ՝ տարեկան ծրագիր) բյուջետային ֆինանսավորման հայտ:

12. Ինովացիոն նախագծերի հեղինակները տեղեկացվում են փորձագետների բացասական եզրակացության մասին:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

13. Լիազոր մարմնի կողմից հաստատված տարեկան ծրագիրը լիազոր մարմնի կողմից բյուջետային գործընթացով սահմանված ժամկետներում համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ՝ հաջորդ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում ընդգրկելու նպատակով և ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

14. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո օրենքում ընդգրկված տարեկան ծրագրի առանձին ինովացիոն նախագծերի իրականացման համար դրանց ղեկավարների հետ լիազոր մարմինը կնքում է պայմանագրեր:

15. Պայմանագրերում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, նշվում են համապատասխան ինովացիոն նախագծի անվանումը, նրա ղեկավարը, կազմակերպությունը, որտեղ պետք է իրականացվի նախագիծը, նախագծի իրականացման ժամկետները և պայմանները, ֆինանսավորման չափը, ինչպես նաև հաշվետվության

ձևերը, նախագծի վերջնական կատարողական ակտերի ներկայացման ժամկետները և արդյունքների գնահատման կարգը:

16. Ինովացիոն նախագծի իրականացման համար հատկացված գումարներով ձեռք բերված սարքավորումները տնօրինում է տվյալ նախագծի ղեկավարը՝ առանց օտարման իրավունքի: Նախագծի ավարտից հետո սարքավորումները տնօրինվում են լիազոր մարմնի սահմանած կարգով:

IV. ԻՆՈՎԱՑԻՈՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼԸ

17. Ինովացիոն նախագծերի կատարման մասին նախագծերի ղեկավարները լիազոր մարմին են ներկայացնում ընթացիկ (եռամսյակային), տարեկան և ամփոփիչ հաշվետվություններ:

Հաշվետվությունները ներկայացնելու ժամկետներ են սահմանվում՝

1) ընթացիկ (եռամսյակային) և տարեկան հաշվետվությունների համար՝ հաշվետու ժամկետի ավարտից հետո 10 օր.

2) ամփոփիչ հաշվետվությունների համար՝ նախագծի իրականացման ժամկետի ավարտից հետո 20 օր:

18. Լիազոր մարմինը հաշվետվությունները տրամադրում է մրցութային հանձնաժողովի քննարկմանը, որին մասնակցում են տվյալ նախագծի փորձաքննությունն իրականացրած փորձագետները: Հաշվետվությունները քննարկելիս գնահատվում են նախագծերի իրականացման ամբողջական և առանձին փուլերի արդյունքները, դրանց համապատասխանությունը նախագծերի առաջադրանքներին, միջոցների օգտագործման արդյունավետությունը, նախագծերը շարունակելու նպատակահարմարությունը, ինչպես նաև ավարտվող աշխատանքների վերջնական արդյունքները ներդրման և կիրառման երաշխավորելու հնարավորությունները: Մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատվում է լիազոր մարմնի կողմից:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**